

Ս. Յովհաննու հիւանդանոցի ասպետներուն, որպէս զի անոնց հաշուոյն երթեկող նաւերը զերծ մնային մաքսէ: Լատիներէն նոյն արտօնագիրները կը մնան ցարգ, ինչպէս Բայէն 1152ին, նոյնպէս Տը Շաթիյեոն 1177ին, վերահաստատած են այդ արտօնութիւնները:

Քէրէկի բերդին նորոգութիւնը կ'սկսի Երուսաղէմի լատին թագաւորներու ժամանակ: Նշանաւոր է նոյն բերդի եկեղեցին, որուն նկարագրութիւնն է հետեւեալը. «բերդին արեւելեան ճակատը շինուած է այն միւնոյն վարպետներէն՝ որ Թորթոզի մայր եկեղեցւոյն ամենէն հին մասը շինեցին, վասն զի երկու շէնքերուն մէջ միւնոյն է վիմագրական նշաններու շարքը: Պատերուն դուրսի կողմի քարերը քիչ յղկուած են և եզրաքարերը խիտ շարուած:

Քէրէկի բերդին փոքր եկեղեցին ունի կողակ մը և երեք գերանամէջով պարզ նաւ մը: Կողակը կը կազմէ երկրորդ պատին արտագիծ մը և մեծազանգուած որմի մը կցուած է, և և որ կտրուած անկեան մը քառակուսի մը յատակագիծը ունի: Նաւը ծածկուած է կորած և որբանով մը և պարզ կիսասիւններու կըռթընող հեծանակախերով: Կիսասիւնները միայն ճակատակուած են. ճակատակը կը մեղմանայ քառակուսի յատակագիծով բարաւորին (imposte) տակ, ինչպէս հեծանակալը. կամարի բարաւորը կիսասիւններու բարաւորները կ'երաշխաւորէ, անոնք իբր կտրած (profil) ունին գօտի մը, փորոքներէ (rainures) շրջանակուած փորուածք մը (gorge) և գաւազան մը (baguette):

Ինչպէս Montjoieի մայր եկեղեցւոյ նաւուն մէջ, կողմնակի պատերը մեծ աղեղներով՝ կրկնակամար, առանց հեծանակալի քանդակուած են: Ուղղանկիւն պատուհանները կամարին մէջ մտած ձևով յարդարուած են, հարաւի կողմէն երկու գերանամէջերով (travée), իսկ հիւսիսէն միայն մէկ գերանամէջով: Կոզակը ունի միայն փոքր կամարածե պատուհան մը: Գլխաւոր լոյսը կ'առնէ ճակատի մեծ պատուհանէն: Վերջինս ունի կրկնակ շրջագարդ (chambrante) մը որ կորածե է, նման այն մայրադրան (portail) որուն վրայ ալ շինուած է: Այս մայրադրան վերին կորութիւնը իբր ցցուակ (moulure) ունի ցցանկիւնին (arête) վրայ պարզ փորուածք մը և կը շրջանակուի բարաւորներու ցցուածին նման կամարաքիւղով (archivolte): Ինչպէս